*
* *

ԼԵՌԵՆՅԻ

Թող դատապարտած նոյն իր ամօթով
Մեզ միշտ հալածէ զրպարտութիւնը
Եւ առժամանակ քողարկած մութով
Աննրկատ մընայ ճշմարտութիւնը.
Թող ընկերների սէրը դաւաճան
Քամէ մեր սրտի ամբողջ արիւնը
Եւ մեր բուռն կեանքի ցաւերն անվախճան
Նոր կաթիլներով դառնացնէ թոյնը.
Թող աշխարհն լինի մութ բանտ մեզ համար,
Շղթայ լինեն մեզ կեանքի պայմաններն,
Տարագիրներիս գերեզմանն խաւար
Աւելի շուտ մեզ բանայ իր դռներն, —
Ոչինչ, մենք ունենք վրսեմ երազներ—
Ընբանք մեզ կը տան թեւեր արծիւի,
Ոչինչ. մենք ունենք վեհ, անյաղթ մտքեր—
Ընբանք մեզ կը տան ոյժ անընկճելի։
Եւ անուրջների թեւերի վրան
Կը թռչենք դագաթն մարդկային լեռի,
Մեր մտքի առջև մարդկան ապագան
Կերևայ պայծառ, փառաւոր, բարի։
Հեռու տրխրութիւն ու տարակուսանք,
Պլտուղ կեանքի դառն փորձութիւնների.—
Զրպարտութիւնն ու վատ թշնամանք
Մեծ, հրպարտ հոգուն չեն հասանելի...

Մի լա, իմ ընկեր, իմ սիրած ընկեր,
Մի անիծիր քո սուրբ նըպատակը,
Մի ասիր թէ զուր են ամեն ջանքեր,
Թէ կանգուն կը մնայ միշտ չարի կուռքը.—
Մի բնական օրէնք մարդկային կեանքում,
Օրէնք, որ ծնունդ է իրականութեան,
Մարդկան քայլը միշտ առաջ է ուղղում
Դէպի արդար կետնքն հաւասարութեան։
Եւ խղճա, խղճա այն թըզուկ մարդկանց,
Որ անձնական գարշ կրքերից դրդուած՝
Սուրբ խօսքերն դիմակ են դարձրել իրանց,
Միտք, սիրտ, ըզգացում ոտնատակ արած.
Նըրանց փոքրոգի, վատ արարքներին
Կլինի դատաստան հըզօր, անկաշառ
Եւ սրտութիւնը չէ կարող բնաւին
Նըրանց զերծ պահել պատըժից արդար...
Ո՛չ, մի՛ լա, ընկեր, իմ անգին ընկեր,
Թող անուրջները մեզ ողջ պաշարեն,
Թող վրսեմ մտքերն ուղղեն մեր քայլեր
Դէպ արդարութեան աստղը ոսկեղէն։
Մենք գաղափարի թեւերի վրան
Կը սլանանք վերև բարձունքն անհուն—
Այնտեղից մարդկան պայծառ ապագան
Կեանքը դարձրած մէկ արքայութիւն՝
Կ'ամռքէ մեր ցաւն, մեր խորունկ վէրքն...
Ընկեր իմ, ընկեր, տուր ինձ քո ձեռքը—
Մեր կեանքի շաւղում նեղ ու դժուարին
Բնաւ չենք սայթաքիլ, երբ ենք միասին...

22 յունիսի, 1892 թ.